

ԳՐԱԴՈՍԱԿԱՆ

ՍՅԵՓԱՆ ՈՍԿԻԱՇՏԵՑԻ

Պր. Սիմոն Սիմոնյան շահեկան համար մը կը գնէ գրառէրներու ձեռքը և բանասէրներու սեղանին վրայ: Գիրքին կողքին կը կարդացուի. վերը շնորհալոյս Տաղասաց մը, Ստեփանոս Դաշտեցի, Ուսումնասիրութիւն և Տաղեր, ներքեւը «Յաւելուած» Նաղաշ Յովնաթանի եօթը անտիպ Տաղերը: Գիրքը ապուած է Պէյրուս, 1981ին, Սեան Տպարանը, և կը բաղկանայ 136 էջերէ:

Անուասիկ համարին բովանդակութեան համառօտ պատկերը. Ներածական խօսք՝ էջ 7-8, նորոյայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Դաշտեցի՝ 9-38, Ստեփանոս Դաշտեցիի տաղերը՝ 41-74, Նաղաշ Յովնաթանի անտիպ տաղերը՝ 77-105, Մանթապարութիւններ՝ 107-119, Անթիլիոսի ձեռագիրը՝ 120-127, Վերջարան՝ 128-129, Մատենագիտութիւն՝ 130-134:

Տաղերուն հեղինակը՝ Ստեփանոս Դաշտեցի, Դարուպ աշխարհական մը, ծնած է Ժի. Գարուս կիսուն և ապրած է մինչև յաջորդ դարուն առաջին քառորդը ենթադրաբար (1650?-1725?): Ան որդին էր տէր Բարսեղ քահանայի: Հայրենիքին մէջ որոշ հափով ուսումը ստանալէ յետոյ մեկնած է Հռոմ, աւելի զարգանալու նպատակով: Շրջագայած է նաև «Բի Հըն» գիւղ, ի տանն Պարսից և Յունացի:

Ստեփանոս գրած է քանի մը երկեր,

Բազմեքամբ վեհագունից ճողլն յոգնախուրճ եղանակեին, երգս առեալ մատուցանեն զերթշապականաց զերանաւէտ հոգեղէն հնչմունս, քեզ իմամանուէլ, որ ծնարադայաբար և վերածնորդազգեսմարդկան ձօր յորդեղրութիւն. աղաչանօք հայցեմք 'ի քէն զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգստ:

Այս մի քանի օրինակները կարծում եմ մի մօտաւոր գաղափար կը տան Բ. Շրջանի խրթին և ճոխ լեզուի. Այլև այս շրջանի շարականներից կարելի է հանել երևակայութեան ճոխութիւնը այլաբա-

որոնք աստուածաբանական, վիճարանական բովանդակութիւն ունին, ինչպէս,

1. — Մախաղ Փշրանաց,
2. — Խնդիր Ուղղութեան,
3. — Կոչնակ Ճշմարտութեան:

Դաշտեցիի տաղերը — թիւով 16 — գտնուած են միակ ձեռագրի մը մէջ, որ սեպականութիւնն է Անթիլիոսի կաթողիկոսարանին գրչագրատան: Այդ տաղերէն հինգը երգիծական, պորտաւական բովանդակութիւն ունին, իսկ տասը՝ խրատական, իմաստասիրական:

Ստեփանոս իր տաղերէն հինգը գրած է դարաբար, իսկ մնացեալները ժողովրդական աշխարհիկ լեզուով: Կ'արժէ յատկապէս նշել թէ իր լեզուն լաւ աստղծ կ'ընծայէ հայկական բարբառագիտութեան համար:

Դաշտեցիի խրատական — իմաստասիրական ոտանաւորները աւելի հասկնալի դարձնելու տեսակէտէն իսկապէս գնահատելի են Պրոֆ. Մօրուս Հասարթեանի աւագ բացատրութիւնները գանապաղաբանութեան և ասացմունքներու մասին:

Պր. Սիմոնյան իր այս բազմաշխատ հրատարակութեամբ նոր գէժ մը կ'աւելցնէ հայ տաղասաց աշուղներու փառանքին վրայ, ինչ որ անտարակոյս շահ մըն է հայ գրականութեան համար:

Գիրքին իբրև Յաւելուած հրատարակուած Նաղաշ Յովնաթանի եօթը անտիպ տաղերը — որոնցմէ երեքը Ողբերգութիւն են — իրենց կարգին կը ներկայացնեն արժէքաւոր յաւելում մը այդ արդէն իսկ լաւ ծանօթ տաղասացին գրական վաստակին վրայ:

ԾՈՎԱԿԱՆ

Վեհագունների շատ երաժիշտներ երգելով մատուցանում են երաժիշտների երանաւէտ հոգեղէն հնչիւնների քեզ, իմամանուէլիդ, որ աղայի նման ծնար և մարդկային ազգը Հօր որդեգիր արիր: Աղաչանքներով խնդրում ենք քեզանից, մեր ննջեցեալների քո սուրբերի հետ հանգստացուր:

Նութիւններից, դատաստանի նկարագիրը Քրիստոսի Բ. Գալուստը, հրեշտակների, արդարների և ժողուսրների վիճակը, մի խօսքով՝ ժամանակի դաւանաբանութիւնը: (Շաբ. 6) ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ